

Մարգոյ Պէսոյ իւր հանճարին ճկուհեութեան մէջ կը փայլեցնէ զուտ իտալական ցեղը. ցեղ մը որ մտքի եւ իմացականութեան ամէնէն աւելի այլազան եւ մինչեւ իսկ բոլորովին իրարու հակառակ արտայայտութեանց մէջ, ցոյց կու տայ միշտ այնքան հանճարեղութիւն եւ դիւրութիւն, որուն վրայ կը զմայլին (առանց նախանձի), միւս ամէն ազգեր:

ԳՈՒՆԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

□ □ □

Գունաբոսութիւն ըսել է գոյներու կամ գունաւորուած լոյսերու միջոցաւ բժշկութիւն. նոր բառ մ'է, — կ'ըսէ տոքթ. Լուսինիէ՝, — որովհետեւ Պոլովոյ տը Գուրմէլ աստիճան անգամ ստեղծեց զայն 1891-ին, բայց իրը շատ հին է, որովհետեւ աղբը սանդղեան դպրոցի գնոստիկանը կը խօսին անոր վրայ, եւ որովհետեւ Ջինացիք անյիշատակ դարերէ ի վեր (ինչպէս որ կ'աւանդէ Հայրն Հիւզ), սովորութիւն ունին կարմիր ներկելու ծաղիկէ բոնուած բոլոր հիւանդները, ճիշտ ինչպէս որ Թոն գինացիք եւ Աստրալիոյ ընկնները շան արիւնով կը ներկեն կարմրուկէ բոնուածներուն երեսները: Այս տեսակ բժշկութեան հետքեր կը գտնուին նաեւ Իւրոպայի մէջ. Ռումանիացիք կարմիր շապիկ մը կը հագուեցնեն իրենց վարդափայտ ունեցող հիւանդներուն, եւ Սլաւոնիոյ մէջ կարմրաբուժութիւնը կը գործածուի թէ՛ իրրեւ արտաքին եւ թէ իրրեւ ներքին դեղ, որովհետեւ իրենց հիւանդներուն կարմիր կը հագուեցնեն եւ անոնց շատ նոնալուր կը խմցնեն:

Նոր հետազոտութիւնք շատ հետաքրքրական մեկնութիւն մը կու տան այս դրութեանց. գոյներով բժշկութիւնը կը տարածուի եւ ընդհանուր գործածութեան մէջ կը մտնէ, տեսնելով որ յառաջ բերած արդիւնքը ակնյայտնի եւ անժխտելի է:

Գոյնորու ազդեցութիւնը մանրէներու վրայ.

Բժշկութեան համար գունաւորուած լոյսերու կանոնաւոր կիրառութիւնը հիմնուած է Էնկէլմանի, Վինոկրատսքիի փորձերու վրայ: Այս գիտնականները զանազան փորձեր ընելով միախորշային բոյսերու եւ կենդանեաց վրայ, հաստատապէս ապացուցին որ տարրական կամ նախնական կենսանքի արտայայտութիւնը գործունէութեան լաւագոյն պայմանները կը ներկայացնեն ընդ մէջ արեւային հայելոյ նարնջային եւ կանանչ գոյներու: Եթէ զանազան մանրէներ պատուանկող ջրոյ կաթիլ մը նետենք լուսաւոր հայելոյ վրայ, մանրագէտով նայելով կը տեսնենք որ քիչ ժամանակ վերջ բոլոր մանրէները կը հաւաքուին նարնջային, դեղին եւ դեղին-կանաչ ճառագայթներու շրջանակներու մէջ. եւ այս ոչ թէ միայն մեքենական ձգողական զօրութեան մը հետեւանքն է, որովհետեւ կենսական հակազդեցութիւններ ամենայայտնի կերպով կ'աճին, ինչպէս կը վկայեն կազերու աստտութիւնը եւ խորշային երկրաշխութեանց աւելի շատ արագութիւնը:

Երկու ուրիշ յիշատակելի երեւոյթներ. կարմիրի մէջ, որ հայելոյն աւելի տաք եւ թափանցող մասը կը ներկայացնէ, մանրէներու կենսական գործունէութիւնը չափազանց կ'աճի, բայց շուտով կը դադրի, գրեթէ ոգեսպառ. խիտ կապուպին մէջ, մանրակազոյն եւ թանձր — մանրակազոյնի մէջ (որ հայելոյն քիմիական ճառագայթումներով աւելի ճոխ մասը կը ներկայացնեն) կենսական գործունէութիւնը աստիճանաբար կը դանդաղի եւ կ'անհրեւութեանայ կենդանի գոյացութեան աստիճանաբար ջնջուելովը:

Այնպէս որ կենսաբանական տեսակետով, լուսաւոր հայելոյն մէջ երեք հիմնական բաժիններ կան. կարմիրը՝ որ վայրկենական չափազանց՝ հետեւաբար նաեւ

ոգեսպառ, գործունէութիւն մը կու տայ, ղեկինը և կանանչը՝ որ տեսական հաւասարակշռութեան զօրութիւն մ'ունին, կապոյտը և մանիշակագոյնը՝ որ ի սկզբան հանդարտեցուցիչ են, յետոյ դադարեցուցիչ, վերջը զկծեցուցիչ և հուսկ՝ ջնջող։ Սակայն եթէ գունաւորուած լոյսերը այսպիսի արդիւնք առաջ կը բերեն անջատ ապրող խորշերու վրայ, ինչպէս պիտի ազդեն արդեօք բաղակցեալ էակներու հիւստեաններու վրայ, և մանաւանդ ջղային տարրերու վրայ, որ աւելի զգայուններն են։ Այս հարցման պատասխանեցին Էրնէկ, Սէմբէր, Ֆորէլ և ուրիշ գիտնականներ միջատներու թրթուրներու վրայ իրենց կատարած փորձերով, փորձեր՝ որոնք ամէն ալ միաձայն կը հաւաստեն արեւային հայելոյ զանազան շրջանակներու գործած ազդեցութիւնը՝ սննդառութեան և զարգացման վրայ, ճիշտ այն ոճով, ինչպէս որ առաջ նշանակեցինք։ Նոյն իսկ բարձրագոյն ողնաւորներու և մարդու մէջ ալ այս ազդեցութիւնը գոյութիւն ունի, զրեթէ անմիջապէս, մորթի և անոր մակաբոյծներու վրայ, և աւելի դանդաղ՝ ընդհանուր կազմութեան և ներքին տարրափոխութեան (métabolisme) վրայ, որովհետեւ ջղային զրուծեան ձեռքով կը կատարուի։

Տեսնենք հիմայ գունաւորուած լոյսերու բժշկական զանազան կիրառութիւնները։

Կարմիրաբուժութիւն.

Առանց խօսելու լուսաբուժութեան և արեւաբուժութեան վրայ, որոնք կը հիմնուին սպիտակ լոյսերու վրայ, եթէ՛ աւելու ըլլան և եթէ՛ ոչ, գունաբուժութեան գիտնականօրէն առաջին կիրառութիւնը կը գտնենք տոբթ. Պիի 1902ի վիսպակէնի ժողովին ներկայացուցած տեղեկագրին մէջ։ Պի՝ իրեն կատարած փորձերէն այս հետեւանքը կը հանէ, որ կարմիրը զրգոյիչ է, կանանչը զուգակրչորիչ, մանիշակագոյնը հանգարտեցուցիչ. և կ'ապացուցանէ (ինչպէս արդէն ցուցած

էր բրոֆ. Պոլշառ) որ կարմիր լոյսը մորթը չի զկծեցնէր, և շատ աւելի զօրաւոր թափանցող յատկութիւն մ'ունի քան կապոյտը, որ շատ զկծեցուցիչ է, բայց միայն երեսանց կը ներգործէ։ Տրէյքի (Գորէնհակի մէջ) փորձերէն վերջ, Ֆինսէն, լուսաբուժութեան մեծ ախոյեանը, կարմիր լոյսը գործածեց ծաղիկի դէմ, և կապոյտ լոյսը՝ բիծի, գայլցաւի և մորթի ուրիշ մի քանի չար կեղերու դէմ։ Իրեն ստացած յաջող արդիւնքը քաջալեր մ'եղան ուրիշ բժիշկներու ալ իր զրուծեան հետեւելու, և այսպէս թիման, Պիշլուոյ, Շուլ գործածեցին զայն կարմրուկի դէմ, և Գոֆ, Նորիմպերկի տղայոց հիւանդանոցի բժիշկը, կրցաւ հաւաստել որ հիւանդներու « կարմիր սենկլին » մէջ կեցած ատեն, կարմրուկէ բռնուածներու կարմրութիւնը կը տօգունէր և կ'աւելուէր, ջերմը կը նուազէր, և եթէ նոյն իսկ բոլորովին չազատէին վերահաս վատթարումներէ, աւսոնք իրենց ծանրութիւնը կը կորսնցնէին մեծաւ մասամբ, սակայն երբ կ'արմիր սենկլին մէջ բնակութիւնը ըստ բաւականին չերկարէր, դուրս ելլելէն վերջ դարձեալ կը սկսէին երեւնալ եռուցքը և ջերմը։

[Ուրիշ բժիշկ մ'ալ իր անձնական փորձով կը յաւելու որ, կարմրուկի դէպք մը ամենազգաց կերպով բժշկուեցաւ մի միայն պատուհաններուն կարմիր վարագոյններ դնելով և կարմիր լուսարգել մը՝ կանթեղին վրայ]։

Հաւասարապէս գոհացուցիչ արդիւնք հաւաստեցին Նաեւ Պի՝ ծաղիկի և Գրուքէնպէրկ՝ օձացաւի դէմ։ Բայց կարմիրաբուժութիւնը (կարմիր գունով բժշկութիւն) բուն վարդախտի յատուկ դարմանն է, և հեղինակը կը յիշատակէ ամէն աշխարհի բժիշկներ որոնք այլ եւս այս զրուծեան հաստատուն կողմնակիցներն են. բայց կէտը ենք Նաեւ յիշատակել որ Գաղղիոյ մէջ պակաս չեն այնպիսիներ ալ, որ այս տեսակ բժշկութեան ազդեցութիւնը բոլորովին կ'ուրանան։

Խնդիրը լուծելու համար՝ տոբթ. Կուսէ 1909ին Presse Médicale ի Ապրիլ 28

Թուոյն մէջ նշանաւոր յօդուած մը հրատարակեց որուն մէջ վարդախտէ բռնուած քսանուշորս հիւանդներու կարմիր սննեկի մէջ բուժուելուն պատմութիւնը կ'ընէ Գլոտ-Պէնտառ հիւանդանոցին մէջ. (առաւելագոյն նախագգուշութեան համար այս հիւանդները կարմիր շապիկ մ'ալ հագուած էին). ասոնցմէ ոչ մէկը մեռաւ և միայն երկու հատը փողատապ ունեցան. բայց սակայն Կուժէ՝ դիտելով որ քերմը փոփոխութիւն մը չկրեց՝ ո՛չ տեւողութեան և ոչ ալ սաստկութեան նկատմամբ, և թէ եռուցքը չնուազեցաւ երեսին վրայ աւելի քան ծածկուած մասանց վրայ, կը հետեւնէ որ կարմրաբուժութիւնը կարող չէ ո՛չ ծանր վարդախտները մեղմի փոխելու, և ոչ ալ այս մեղմերուն ընթացքը հատանելու: Հեղինակին կարծիքով, տորթ, Կուժէ չափազանց յոռետես է. և ինքը աւելորդ առարկութեանց պատասխանելէ վերջ կը հետեւցունէ որ տորթ, Կուժէի փորձերը չեն կրնար երբեք նուազեցնել այնքան բազմաթիւ դիտողութեանց արժէքը, որոնց ամէնն ալ նպաստաւոր են այս նոր բժշկական դրութեան:

Կապտաբուժութիւն.

Կապոյտ և մանիշակագոյն լոյսերը տարբեր կերպով կը ներգործեն. քիչ թափանցող են, բայց մորթի համար զվծեցուցիչ են և ամենագօրաւոր մանրէասպան: Սննդէս որ մանիշակագոյն և թանձր-մանիշակագոյն ճառագայթները, անոնք մանաւանդ որ սնդիկի շոգիով կանթեղներէ կը բղիխն, յաջողութեամբ կը գործածուին ջուրը և նաեւ կաթը ստորջնացնելու համար: Սոս ճառագայթներու կիրառութիւնը բժշկութեան (կապտաբուժութեան) մէջ միշտ լաւ բացատրուած չէ, և աստի յառաջ եկած է զարմանալի դէպք մը, որ ոմանք գայլցաւի, բիծերու և օժացաւի դէմ կը գործածեն կապոյտ լոյսը, մինչդեռ այլք կ'ուզեն կարմիր լոյսը: Սոս ճշմարիտ է որ թէ՛ կարմիր լոյսը և թէ՛ կապոյտը, իրենց յատկութեանց զանազանութեամբ հան-

դերձ, կրնան բժշկական միեւնոյն արդիւնքն յառաջ բերել: Սհաւաստիկ երկու օրինակներ. աղջիկ մը որ ջղայնական բիծերով հիւանդացած էր՝ թիթեւ կերպով վատ-թարաքան կապոյտ լոյսի դարմանով, և առագութեամբ բժշկուեցաւ՝ կարմիր լուսով: Ընդհակառակն, յիսուռնէհինգ տարեկան մարդ մը որ թարախային քրոնիք եռքէ բռնուած էր, ոչ մէկ օգուտ տեսաւ կարմիր ճառագայթներով, և իսկոյն առողջացաւ՝ կապոյտ ճառագայթներու կանոնաւոր կիրառութեամբ: Սոս քիչ դէպքերն մէջ միայն կարմիր լոյսը ազդեցիկ կրնար ըլլալ, որովհետեւ թափանցող է, մինչդեռ երկրորդ դէպքը մէջ կապոյտ լոյսը միայն կրնար լաւ արդիւնք յառաջ բերել ջղային դրութեան և մորթի գտնուած յատուկ պայմաններուն համար: Կարմրաբուժութիւն և կապտաբուժութիւն այլեւայլ դէպքերու մէջ հաւասարապէս ազդու են, սակայն առաջինը կը պահպանէ կամ կ'առաւելու կազմութեան բնական պատապարութիւնները և կենսային դիմադրութիւնը, մինչդեռ երկրորդին ներգործութիւնը կը սահմանափակուի միայն մանրէներու գործունէութիւնը և թունաւորումը նուազեցընելու մէջ:

Ոգեբուժութիւն.

Կապոյտ և կարմիր լոյսերը կը գործածուին նաեւ ոգեբուժութեան մէջ. 1890էն ի վեր Պիլոյ տը Կուրմէլ փորձեց մի քանի ատամնացաւեր դարմանել կապոյտ կամ մանիշակագոյն լուսոյ միջոցաւ. հեղինակը կը հաստատէ, որ դիտած է այս գոյնի ակնյայտի հանդարտեցուցիչ ազդեցութիւնը կողմնաթիւային ջղացաւութեանց մէջ. Պինսէն փորձած է մանիշակագոյն և թանձր-մանիշակագոյն ճառագայթներու կանոնաւոր կիրառութիւնը նուազեցնելու համար երեսանց քաղցկեղի և ստեանց քաղցկեղի յառաջ բերած ցաւերը: Շատ աւելի բացայայտ արդիւնք տեսնուած են ջղային հիւանդութեանց բուժման մէջ և կարմիր միջնորոտի մը մէջ, ընկճուած

ջղազարները, ալքոհլահարները, մեկամաղ-
ձոտները, ախոնդանոտները, գրեթէ միշտ
բարեւորում մը կ'ունենան և վերստին կը
ստանան գործունէութեան և շարժման փա-
փաք մը. ընդհակառակն, կապոյտ կամ
մանրշակագոյն միջնուրտի մէջ ջղազոր-
գոնալները, ցնորդները, կատաղիները կը
խաղաղին և կը հանգստանան: Տըքթ.
Պարէզ այս գոյները գործածած է դիւ-
րացնելու համար ախտաբուժական քնարե-
րութիւնը և մտարկութիւնը (suggestion).
հիւանդները՝ դրուելով կարմիր սենեակի
մը մէջ՝ եթէ զգուշացու պէտք ունին,
կամ կապոյտ սենեակի մը մէջ՝ եթէ հան-
դարտութեան պէտք ունին, աւելի լաւ կը
պատասխանեն բժշկին հարցումներուն,
կ'ըմբռնեն իրենց վիճակը, և աւելի շատ
օգուտ կը քաղեն տրուած խորհուրդներէ:

Դեղինը եւ կանանչը: - Կենդանիները
եւ գոյները.

Հագուադէպ են դեղին և կանանչ լոյ-
սերու կիրառութիւնը: Դեղինը գործա-
ծուած է միայն աչաբուժութեան մէջ, ու-
րովհետեւ այս գոյնով ապակիները կը
պաշտպանեն աչքը հայելոյ վերաւորիչ
ճառագայթներուն դէմ, և անօգուտ գիծում-
ները կը խափանեն: Դեղին միջնուրտը
նպաստաւոր կը թուի յօդային ցաւէ վարա-
կուածներու, որոնց մէջ, Գերմանիոյ մէջ
կատարուած փորձերու համեմատ, այս
լոյսը գրեթէ զգալի կերպով մը կը յա-
ւելու ներքին գործարանական թթուակա-
ցումներու սաստկութիւնը:

Իսկ կանաչ լոյսը, ղեռ լաւ սահմա-
նուած չէ թէ ինչ բանի կրնայ ծառայել.
բացայայտ է որ այս գոյնը տեսութեան
հանգստութիւն կը պատճառէ և հետեւա-
բար կը ներգործէ խաղաղութիւն և թե-
րեւ նաեւ քուն: (Ո՞վ արդեօք չէ հաւատ-
տած անձին փորձով խաղաղ և ախորժիւի
անդրբերութիւն մը, մեղմ և զուարթ տրա-
մադրութիւն մը, կանանչագեղ դաշտի կամ
բուրաստանի մը մէջ շրջագայելէն յետոյ):

Գոյներու ներգործած ազդեցութիւնը նոյն

իսկ բժշկական ասպարէզէ դուրս կը տես-
նուի, որովհետեւ անոնց կենսաբանական
ներգործութիւնը կ'ազդէ անհատներու ոգ-
ւոյն վրայ, իրենց բնութեան մի քանի
տարրերու վրայ, իրենց հոգւոյ վայրկե-
նական տրամադրութեանց վրայ: Բայց
այս դեռ հազիւ սկզբնաւորուած գիտու-
թիւն մ'է, և կարելի չէ դեռ այս նկատ-
մամբ շատ բան ըսել: Տարակոյս չկայ,
օրինակի համար, որ կենդանիները շատ
զգայուն են գոյներու նկատմամբ. ցուլը,
փիղը, ձին, շունը, արագաղճ՝ կարմիր գոյ-
նէն կը ներգործուին. յայտնի է որ ցուլը
միայն այս գոյնը տեսնելով իսկ կը զայ-
րանայ, և թէ բաւական է լոկ կարմիր
ծածկը լոյսով մը պատել շննոցը՝ դժոխային
աղմուկ մը ստանալու համար: Ընդհակա-
ռակն կատուն թերեւ աւելի կապոյտ գոյ-
նեով կ'ազդուի:

Գոյները եւ գաղափարանիշները.

Նախնական մարդը, վայրենին, հիմայ
ալ շատ զգայուն է վառ գոյներու հան-
դէպ, և թերեւս այս պատճառաւ է որ
պատերազմիկ ցեղերը կը ներկեն մարմին-
նին և կարմիր կը հագուին: Եւ թերեւս
զաղափարաց նոյն զուգորդութեան մէջ
պէտք ենք փնտել մի քանի գոյներու
զաղափարային նշանակութեան զօրութիւ-
նը: Թերեւս կարմիրը, որովհետեւ զրգող
է և ոյժ գոյացնող, այս պատճառաւ ծա-
ռայած ըլլայ նշանակելու համար եռանդն,
բռնութիւն, իշխանութիւն. և թերեւս այս
պատճառաւ ալ ըլլայ, որ Եգիպտոսի,
Պարսկաստանի, Ֆունաստանի, Հոովմայ
և մինչեւ իսկ Տաճկաց մէջ կարմիր հան-
դերձեղէնք և զարդարանք վերապահուած
էին դատաւորներու, զօրավարներու և քա-
հանայից. ուղղափառ ծիրանաւորաց եւ
կեղեցական հանդերձանքն ալ կարմիր
են, ինչպէս բարձրագոյն ատենակալներու
պատմունճանը և թագաւորներու ծիրանին:
Գրեթէ ամէն երկրի մէջ, բայց մաս-
նաւորաբար Պաղդիոյ մէջ, կարմիր գոյնի
զաղափարային նշանակութեան հակադիր

է կապույտի նշանակութիւնը. ինչ ինչ գաւառներու մէջ կարմիրը չարերու, սատաշայի, « անգղիացւոց » գոյնն է, մինչդէռ կապույտը բարի, խաղաղ և առաքինի մարդկանց գոյնն է:

Այս ճամբով կարելի է շատ քաջիկ մեկնել ջանալու համար զինանշաններու, դրօշակներու, զինուորական համազգեստ, ներու գոյներուն արտայայտած գաղափարները, բայց կարելի է որ մարդ երթայ և երթայ՝ և վերջապէս հասնի չեմ գիտեր ուր:

Արդուզարդի կանոններու մէջ ալ բաւական ազդեցութիւն ունի գոյներու կիրառութիւնը, և ընդհանրապէս կ'ըսուի որ խարտեաշները պէտք են կապույտ հագուիլ, կարմիրները՝ կանանչ, շագանակագոյնները՝ մանիշակագոյն, թուխերը՝ կարմիր, բայց այս կանոններն ալ վայելչութեամբ և ընտիր ճաշակով պէտք են բարեխառնուիլ, և այս մասին մէջ ոչ ոք ուրիշի խորհուրդին կը կարօտի:

ՄԱՏԵՆԱԳՐԱՅ ԶԱՐՄԱՆԱԼԻ ՍԽԱԼՆԵՐ *



Albert Cim կը շարունակէ իւր հետաքրքրական յօդուածը *La Revue* պարբերականին մէջ: Կը յիշատակէ Աղեքսանդր Տիւմայն որ *Le Collier de la Reine*-ի մէջ ակնավաճառի դիմաց Տոն Մանուէլի զարմանքը ցուցնելու համար, կը գրէ. « Ահ, ա՛հ աղաղակեց Տոն Մանուէլ փորթուգալերէն »: Ինչպէս պիտի աղաղակէր ուրիշ լեզուով... — Աններեկի սխալ մը կը գործէ ժամանակագրութեան Պալզագ Cousin Pons-ի մէջ, երբ հովանարի մը վրայ խօսելով՝ կ'ըսէ. « աստուածային գլուխ գործոց մը, զոր անտարակոյս Լուդովիկոս Ժեռտիկին Տը Բոմբատուրին համար ապսպրած է: Վաղդոյ յոգնած է զայս նկարելու համար »: Առանց դիտելու որ Վաղդոյ մեռած է

1721-ին, ճիշտ այն տարին որ մարքիզուհին ծնած է: Նոյն ինքն Պալզագ *Muse du Département*-ի մէջ կը նկարագրէ աղախին մը, որ ուրիշի մը աչքերը լաւ մը կապելէ վերջ, որպէս զի չկարենայ տեսնել, այս տարօրինակ յանձնարարութիւնը կ'ընէ անոր. « Լա ուշ գիր, լըլլայ թէ նշաններէս մին աչքէ փախցնես »: Նոյնպիսի սխալ մ'ալ կը գործէ Էմիլ Բուվիյեռն *Petites âmes*-ի մէջ. « Ժիւնըր, համեստ կոյր մը, ... մեկամաղձոտ նայածք մը կը դարձնէ դատարկ շիշին վրայ »:

Կոյրերու փոխարէն որ կը տեսնեն, ուրիշ տեղ մ'ալ Պալզագ, համբերու խօսելու տայ: *Cousine Bette*-ի մէջ ոստիկանութեան պաշտօնեայ մը՝ « յոտրեանք կը պոտասխանէ, այդ կինը խնդ չէ »: Ժորժ Սանտ ալ Հերովդէս և Պիղատոն իրարու հետ կը շփոթէ, երբ կը գրէ. « անոնք ուրիշ բան չեն գիտեր, բայց եթէ Հերովդէսի պէս ձեռքերնին յռայ, ընկերական ամէն անօրէնութեանց համար »:

Գրագէտներ եւ գիտութիւնք.

Բայց ամէնէն աւելի գիտական և թուաբանական նիւթերու մէջ կը փայլի գրագէտներու անուշադրութիւնը:

Տը Շան Ֆիլէօրի *Pasquette*-ի մէջ կը գրէ. « Աղքատ այրի մը որ միայն մէկ մէկնատիկ որդի մ'ունէր »: Անտարակոյս շատ հետաքրքրական պիտի ըլլար եթէ երկու հատ մէկնատիկ զաւակ ունենար:

Մտանշալ՝ իւր նորավէպներէ միոյն մէջ (*Le philtre*), իր անձինքներէ մին վայրկենի մը մէջ տասը տարի աւելի կը ծերացնէ. « Ես քեզմէ երեսուն տարի աւելի ունիմ, Սիբիլի Էլէոնորա... — Դու տասնեօթի տարեկան ես, իսկ ես յիսուն և ինք »...

Կիւսկավ Ֆլուպէն *Madame Bovary*-ի մէջ կ'ըսէ որ, « Թուօլ՝ Շառլին բերաւ՝